



ԿԵՐՊՈՐՈՒՄՆԵՐ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. փետրվար: № 14: Գինը՝ 50 կոպ.

Բ Ո Ւ Մ Ա Ն Ց Ա Ն

Վ Ե Ր Ջ Ի Ն Տ Ա Գ Ն Ա Պ Ը

Վեր է կացել հին վիշապը նոր բափով,
Վեր է կացել վերջին մոյի տազնապով,
Արյունբույշտ սնիրներով ահա՛վոր
Ման է շնչում լեռներն ի վեր պլուր:

Ու նրա դեմ ելած անգույց, անսաման,
Հարձակ տալով ամեն կողմից՝ հայտարյան
Հին հին հույսերն ու հուզմունքը դարձվոր
Մասն են լինում լեռներն ի վեր պլուր...

Ու լեռները պատվով մոր պես վերստից
Արևոտում են գլուխները իրենց հին,
Միշտ խորհեցով ամպերի տակ սևակեան,
Ու հենց իրենց հառաչանքն են կուտակված...



Հայաստանի մամուլային ԱՄՆ-ի պրեզիդենտ Լառա Բուրի և նրան շնորհակալությամբ հարգանքներ հայտնող Լառա Բուրի:

Վրացական իՍՀ Փոքի Բաղաթի Լավանանգուտում կառանվել է իտալական «Jolli NERO» հավր. որի ախտաօգնականում են զանգվում Սպիտակում տեղի ունեցած Եփրատիցի տուժածների համար 85 տեղաները: Լուսանկարում Լավանանգուտի Կառույցի Չիմինե և Սպիտակի Բաղաթիցի գործկան Լավանանգուտի Լավանանգուտի Փոքի Բաղաթի Լավանանգուտում:




ՑԱՎ ԱԿՑՈՒՓՑԱՆ ԻՈՍԻԵՐ

Հայկական բարեգործական միության (ԱՄՆ) փոխնախագահ ԼՈՒԻՋ ՄԻՄՈՆ

— Այդ սարսափելի նորությունը ես իմացա հեռուստատեսային նորություններից: Ինչ զգացի այդ պահին: Ցրնցալարովա՞ծի մեջ ընկա: Իսկույն անսովոր դեպի հեռուստա՞ զանգահարելու Երևան: Գլխումս սուկ մի միտք էր՝ կենդանի՞ են արդյոք, հարազատներս, մտերիմներս: Բայց կապ չկար և չկա մինչև այժմ էլ: Առայժմ անտեսողակ

եմ մնացել ոչ միայն ես, այլև ԱՄՆ-ում բնակվող բազում այլ հայեր: Ներկայումս ԽՍՀՄ ողորակ լինելու համար պատրաստ են տուժածների օգնության համար հավաքած իրերը, դեղորայքը, սննդամթերքը: Ես մեզ մտղթում եմ արիություն: Չէ որ միայն միասնաբար կարելի է հարթահարել նման հրեշտակ, անսպանելի վիշտը:



Լուսանկարը՝ ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

1988 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 7




Լուսանկարները՝ ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ԳԱՏՄՈՒՄ Է ԲՈՒՅՐԸ

ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻ ԳՈՒՐԳԱՐՅԱՆ

Երբ «Սովետական Հայաստան» թերթը անվանակոչվեց «Խորհրդային Հայաստան», եղբայրս՝ Կարապետ Գորգարյանը այլևս չկար, մինչդեռ այնքան էր սպասում այդ խորհրդային, բառին: Ու միշտ՝ թե մեր առօրյա խոսակցության ընթացքում, թե իր ուսանողներին դասավանդելիս, խոսում էր այդ բառի մշակակության և անհրաժեշտության մասին: Հայասեր էր, էությանը բարի ու նույնը պահանջում էր բոլորից: Դժվար կյանք էր ունեցել. բանտ, աքսոր... Մի քանի ամիս Քանաքեռի և Էջմիածնի գաղութներում մնալուց հետո (1941 թ.), նրան աքսորում են: 15 տարվա աքսորավայրի տառապանքներից հետո, 1956 թվականի օգոստոսի 30-ին Կ. Գորգարյանը վերստին դառնում է իր հարազատ քաղաքը՝ արդարացված: Վերստին դառնում և կրկին շարունակում է մայրենի լեզվի ուսումնասիրությունը, պաշտպանում է դիսերտացիա, ստանում գիտական աստիճան (դոցենտ), աշխատում հայրենի քաղաքի մանկավարժական ինստիտուտում: Սակայն 1988 թվականի դեկտեմբերի 7-ին նա իր մահ կանաչում կնքում է «Կունայրի» («Բանվոր») թերթի խցի-բազումությունում, որի հետ կապված էր սերտորեն և այդ օրն էլ, այդ պահին, այնտեղ էր գտնվում:



Կ. Գորգարյանի հիշատակի հավերժացումը նրա հրատարակված գրքերն են և նրա ուսուցանած սաները:

ԱՐԹՈՒՐ (ՍԱՐԳԻՍ) ՌԱԶՄԻՎԻ ԽԱԶՍՏՐՅԱՆ

1964 թ. փետրվարի 18-ին ԽԱԶՍՏՐՅԱՆՆԵՐԻ տանը թեւածում էր ուրախությունը: Ծնվել էր արու գավակ, որի հետ այնքան հույսեր ու երազներ էին կապել ծնողները: 4-րդ դասարանի պարծանքը էր նա: Ավարտելով միջնակարգը, ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի Լեհիմակաճի մասնաճյուղի երկնային բաժինը: Սովորելու հետ զուգահեռ աշխատել է մագնիսաֆիզիկայի գործարանում. որպես կոմբիլիտմիության քարտուղար: Ծառայել է խորհրդային բանակում, որի ընթացքում միայն պատվոգրեր ու շնորհակագրեր է բերել:

Ապագայի հանդեպ հույսեր էին կապում թե գործարանի ղեկավարները, և թե ծընողները: Ավարտելով 24 գարուններով: ԾՆՈՒՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԵՆՔ. ԹԵ՝ ՄԱՀԻ ՈՂԱՆՔ:

Միգրացիա այս էլ էր նակատագրի խաղ, որ մոտազուտ Փետրվարի 18-ին «Հիշողության մոլ» շնորհավորում ենք ծնունդը: 24՝ նորարարիչ գարուններ և 24 կոկոն վարդեր տեսար դու: Աշխարհի վրայով էլի շատ ու շատ գարուններ կապենք, բայց դու հավերժ կմնաս 24 գարուն: Ավարտելով 25-ին չհասար: Ու հիմա անհնար է ամոքել ծնողների վիշտը, որոնք սպասում են քո հուշերով ու նկարներով: Մեկնակը զարդարյալ



են քո նկարները, փոքրից մինչև 24 տարեկան: Տան միակ հույսն էիր, ծնողներից հեռուց ու պարծանքը: Մայրի չի հաշտվում քո կորստյան մտքի հետ: Նա արտասովորապես աչքերով կանգնում է նկարներից առաջ, նայում է քո թախծուտ կապույտ աչքերին, և նրա մշուշոտ աչքերի առաջ կհնոճապալենի մահն սահում եմ քո 24 տարեկանի պարած երջանիկ օրերը: Հայրդ՝ ամեն բարի լույսի հետ կյանքի ցողով լի ծաղիկներ է բերում քեզ, և կարծես այդ ցողով ուզում է կենդանացնել քեզ և միշտ կրկնում՝ —Ախ, Արթուր: Արև կար քո կապույտ աչքերում, արև, կյանք ու լույս... Կյանքում կենսախիճ էիր, եռանդուն այնքան, որ դիմացինից էլ էիր վարակում քո կարկաշուն ծիծաղով, գործելու, լիաթոք շնչելու և ապրելու քո տրամադրությամբ: Միբեյի Արթուր՝ հիմա բոլորը հիշում են քեզ ու կարոտում: Վշտամար մայրի արտի կսկիծով է շնորհավորում ծնունդը... «Ախ իմ գարուն քաղիկ...»:



ԷՐԻԿ ՄԻՇԱՆԻ ԶԱՂՈՑԱՆ

Ծնվել է 1958 թվականին, Անհիմակում: Ավարտել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Ինստիտուտի նախկին ուսանողը շուտով դասախոսեց նույն յուսարաններում, ուր երեկ մտնում էր որպես ուսանող:

1988 թվականին բոլորում էր նրա 30-ամյակը: Այդ իմաստով նա նայում էր իր գիտակցական կյանքին ու ձեռք բերումներին: Դա հաշվետվություն էր ինքն իր մեջ: Հաշվետվություն, որ հայրը ավելի շուտ էր հաշվարկել: Նա

ամուսնացել էր Անահիտի հետ. գտել իր կյանքի իսկական ընկերոջը: Հինգ էլ հայրը մտովի որերորդ անգամ տեսնում է Էրիկին՝ Զառային նստեցրած ձկնիկին: Խոսում էր դատեր հետ ամբողջովին մանկացած, շրջապատից անջատված, իր քաղցրիկ դատրիկով տարված: Նրանք երկուսով գրուցում էին, իսկ գրուցը իսկական մի երազանք էր:

Էրիկ Զառայանը ընդունվել էր Մոսկվայի Պուշկինի անվան ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա պատանհի ուսանողները գրականության դասախոսի մեջ գտնում էին ավագ ընկերոջն ու մանկավարժին, հուզվում նրա աստիքի պաշտպանությամբ: Ինչ պես ատում են, նա «հինգ պատկան թեկնածու էր»:

Բայց պաշտպանությունը չկայացավ:

Մեկ օր առաջ եղեռնական այն օրվանից՝ դեկտեմբերի 8-ին. ընտանիքը նշեց արժանավոր որդու 30-ամյակը: Կյանքի ամենագեղեցիկ ծամանակը, հասուն երիտասարդության աամնագիծը, որը նա դիմապորտ էր նվաճում: Նրա կորուստը հարված էր դարձրել մարդկային ունի ֆոնդին:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԴՈՄԱՆՈՍ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Ծնվել է 1956-ին, սովորել է Օրբոնիկիներ անվան դպրոցում: Ընտրել է ամենամարդասիրական մասնագիտությունը՝ կոչումով բժիշկ էր: Ավարտելուց հետո գործուղվել է Նո 3 հիվանդանոց, ուր

էլ աշխատում էր որպես թերապևտ:

Մտայլ էր դեկտեմբերի 7-ի առավոտը: Ջնջվի այդ թիվը. ու այլևս չհիշվի... Բայց մեր թանկագին ամուսնուհի թույլ չեն տալիս, մենք դեռ երկար ու երկար պիտի միջենք ու տխրենք՝ հենց նրանց համար, Ռոմանոսի համար:

Առավոտ շուտ նա գործի շտապեց, ինչ իմանար որ վեր չին անգամ է...

Նայեց, զննեց իր հիվանդներին, նոր բուժում նշանակեց շատերին, արտապնդեց նրանց իր բարի ու հուսալից խոսքերով: Մի քանիսն էլ օրհնեցին՝ թե կյանքը երկար լինի, բայես... Օրհնանքը տեղ չհասավ: Ոչինչ չկարողացան անել, փլվեց, տակն ու վրա եղավ սմեկ ինչ: Ռոմանոսին գտան սպիտակ խալաթով, ֆենդանդուկուպը ականջներին...



ԱՆԱՀԻՏ ԼԵՎՈՒՈՒՎԱՆՊԵՏՅԱՆ

Այս սնանյա գեղեցկուհին 20 ծաղկած գարուն տեսավ, 21-ը չբոլորած՝ ակ անպը եկավ, չորեք դուռը, վաղվան ներքնացրում նրա զավակին թողեց առանց մոր: Այնտեղ հաջորդող արդեն կորոթող տարին է, սակայն անհնարին է հաշտվել կատարվածի հետ, մեր համար շատ դժվար է կորցնել միևնույնը աղջկան, այն-

պիսի աղջկա, որը կյանքում ոչ տխրել էր և ոչ էլ տխրեցրել մարդկանց: Լավ ասումն քող, ասող խոսող, միշտ ծըպ տներես, ավաղ... Սովորել է Տերյանի անվան դպրոցում, ինչպես նաև Նո 5 երաժշտական դպրոցում: Ավարտելուց հետո ուսումը շարունակել է բժշկական ուսումնարանում: Շուտով պիտի աշխատեր 3-րդ մանկական հիվանդանոցում: Դեկտեմբերի 7-ին, այդ կորուստարար օրը նա երեխայի հետ տանն էր, խոսում էր մոր հետ հեռախոսով: Նա վտանգը զգաց, բայց չհասցրեց դուրս փախչել, փլվածքները ծանրորեն, դաժանորեն իջան ներքև... Քոր և ամուսնու ջանքերով, դուրս բերեցին նրան նույն օրը՝ կարծելով փրկեցին, բայց ջանել աղջկա կյանքը տևեց ընդամենը 45 րոպե: Մտորը չի կարող մոտանալ այն խոսքերը, որով աղջիկը կյանք էր խնդրում, աստված կանչում, որ ինքը իր ձեռքով մեծացնի իր սիրալուսն փոքրիկին՝ Մադուսիկին:

ՀԱՄԵՐ ԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տեղի ունեցած ողբերգության լուրը Փարիզի արվարձանային ոչ մեծ Բանյո քաղաք հասավ այն պահին, երբ նշվում էր Բանյո և Կիրովական քաղաքների եղբայրացման քսանամյակը: Հայաստանի պատմության հարկադրյալ իսկույն տուն վերագրված...

— Քաղաքապետարա ն ն այժմ բաց կլինի շաքաթ և կիրակի օրերին, իսկ շաքաթ վա մյուս օրերին՝ մինչև երեկոյան ժամը 8-ը, որպեսզի օգնություն ցուցաբերող բոլոր մարդիկ կարողանան հանձնել հագուստ, զեղորայք, դրամ,— պատմում է Բանյոյի քաղաքապետարանի պատասխանատու բարտուղար Էռնեստո Կաստին:

— Բացի այդ, բացված է բանկային հատուկ հաշիվ՝ դրամական փոխանցումների համար: Քաղաքային խորհրդի արտակարգ նիստում կքննարկվի աղետալների կարիքների համար քաղաքի միջոցներից 150 հազար ֆրանկ մասհանելու հարցը:

Դեկտեմբերի կեսերին մեզ մտ ապետը է տեղի ունենար կիրովականի արտիստների համերգը: Այն հետաձգված է: Հայաստանի արտիստների փոխարեն ելույթ կունենան ֆրանսիացիները. դա կլինի համերաշխության համերգ:

Ֆրանսիայում հայկական համայնքի կողմից օգնություն ցուցաբերելու հարցերը կարգի ենցնում է այս օրերին Փարիզում կազմակերպված «ՍՍՍՀ ԶԱՅԱՏԱՆ» կենտրոնը:

Երկրաշարժի հետևանքների վերացման ուղղությամբ իրենց պատրաստակամության մասին հայտնեցին ֆրանսիական հասարակական այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսիք են «Սեկուրպոպուլյուրը», «Բժիշկներ՝ առանց սահմանների»:

— Տեղի ունեցածի մասին լսելուց անմիջապես հետո մենք մասսայական ինֆորմացիայի միջոցներով կոչ արեցինք ֆրանսիացիներին՝ հանդես բերելու համերաշխություն,— ասում է «Սեկուրպոպուլյուրի» ազգային բարտուղար Դանիել Աստալին:

— ԽՍՀՄ կթուշի մեր ներկայացուցիչների բրիգադը, որպեսզի պարզի, թե հասկանա ինչ է հարկավոր աղետալներին:

Գ. ՅԱԿՈՒՇԿԻՆ

ԱՊՆ-ի սեփական թղթակից

ՇԻՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅՈՅ ԴՈՄՊԵՅԸ

(Պ ո ն մ)

Չունիս շեն մնացած մի տուն, մի փողոց, Դարձել ես բուհրու ձագոց օրորոց... ԶիվԱՆԻ

... 1988... 7-ր դեկտեմբերի... Քիվն ու օրը զարհուրելի Հայոց երկրաշարժի... Արդեն պիտի կոչվենք երկրաշարժի սերունդ Արդեն պիտի լինենք երկրաշարժից ուժեղ:

Եվ այսօրեց հետո, երբ որ տեսի եմ մենք, Այն, ինչ-որ շեն տեսի աստվածներն անգամ, Ու սրանից հետո, երբ մեր աշխ առաջ նույնացել են սով՝ Մեր շիմացյալ մահի, Մեր ձենդյան անի վկայական-բուլքը, Որ սե գիր է կոչվում, Որտեղ դաշված թիվը աշխարհին է հայտնի— նույնն է թիվը մահվան եվ ձենդյան թիվը... Անբնական մի բան.— Անբնական որևան, նույնքան անբնական: Չգար, թիվն այդ չգար, Չգար ու չլինեք— Ոչ ու բարով եկավ, Գնար ու ետ չգար, Գնար ու ետ չգար— Ոչ ու բարով եկավ, Ոչ ու բարով եկավ Ու մեր կյանքը կերավ... Անուն տալու համար անգամ մի բառ չկա, Չկա ու չի լինի ...

Արդեն մենք կոչվում ենք երկրաշարժի սերունդ Արդեն մենք ուժեղ ենք երկրաշարժից: Բայց այսօրեց հետո նոր հասկացանք միայն, Որ սրանից առաջ նույնացել են սևով՝ Մեր իմացյալ մահի, Մեր ողբերգյան անի, վկայական-բուլքը Որ Սե գիր է կոչվում... նույնացել են սևով՝ Գոված մեր իսկ ձեռքով, Իսկ մենք չենք իմացել... նույնացել են սևով՝ Մեր կատրված ձեռքով... ... Կրկին, դարձյալ, ետից— Մենք ետ պիտի նայենք խորքը դարի, երբ մուրված մի արշալույս պառկեց հողին... Եվ, ով, հեզեանք Հայոց աստվածներին... Դարն այս հայաճալած՝ Արեաքաթի վերջույնսով բշեում է հող Ողբ-ողբ բաղելով մեզ Բիրիական լեռան բաց աչիերի առաջ...

Օ, Տեր, երբ տերն ես, իրոք, տիեզերքի ոգու, երբ դու ալուսել ես լույսի և գրույթյան, երբ դու աղբյուր ես խղիի-հարուրյան, երբ դու ձեռք ես արատուսուսու լույսի, երբ դու Մեր ես, Հավատ և երկը, երբ դու Աստված ես,— Ինչու՞ մկրտեցիր մեզ մեր արյամբ, բեշո՞ւր...

Եվ այսօրեց հետո, Ու սրանից հետո, Ի՞նչ անուն տակ սրան, Ի՞նչ բառ գտնենք, ասա, եղևո՞ն էր բնական՝ անբնական ձեռք, Քե բանական ինչ-որ բան կար այս դժոխում... Ասա...

Օ, Տեր, Մեր որ մեղանշումի, Որ մեղիերի համար անեմք լիք, Որ հանցանքի համար անենք լիք, Մեր ո՞ր զավի համար էո հավատի հանդեպ՝ Մեզ փորձույթյան տառար շարշարանաց:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Հ Ի Ն Գ Ը ' Ն Ո Ւ Յ Ն Գ Ե Ր Դ Ա Ս Տ Ա Ն Ի Ց



սիրված ու հարգված մտերիմ մերի, հարազատների կողմից: Երիտասարդ հասակում կորցնում է ամուսնուն և անձնակի-րաբար կրթում ու դաստիարակում է չորս երեխաներին՝ ու թողնակներին:

ԱՄԱՅԱ ՅԱԶԻՉՅԱՆԸ ողբերգական մահով հեռացավ կյանքից, փրկածների տակ մնալով հարսի ու երեք տարեկան թոռան հետ միասին:

ՍՈՒՍԱՆԱ ԱՅՈՒԹԻ ՅԱԶԻՉՅԱՆ—ծնվել է 1955 թ. սեպտեմբերի 14-ին: Սովորել է Մ. Մաշտոցի անվան դպրոցում: Աշխատում էր էլեկտրատեխնիկական գործարանի, վեբախնարարության բաժնում որպես վերահսկիչ: Բնակչության մեջ ու հանդարտ այս աղջիկը անհունորեն նվիրված էր ամուսնուն և երեխաներին: Նա կյանքից հեռացավ իր երկու երեխաների հետ՝ խոր վիշտ պատճառելով հարազատներին, ամուսնուն և ութ տարեկան դստերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԷԴՈՒԱՐԻԻ ՅԱԶԻՉՅԱՆ—Ընդամենը երեք զարուհի տեսավ 1985 թվականին ծնված Հովհաննեսը: Ուշիմ, աշխույժ ու ժիր մանուկը ծնողների ուրախությունն ու հպարտությունն էր: Ծառերի նման նա էլ գոհ գնաց ահա վոր երկրաշարժին՝ թողնելով միայն հիշողություններ ու արցունքներ:

ՆԱԻԲԱ ԷԴՈՒԱՐԻԻ ՅԱԶԻՉՅԱՆ—ծնվել է 1979 թ., սովորում էր անգլիական թե. քումով № 20 դպրոցի 4-րդ դասարանում, բարձր գնահա-

տականներով, ուներ լուրջ խոհուն հայացք: Նախքան նաև № 4 երաժշտական դպրոցի սան էր: Գեղարվեստի 7-ին գոնվեց իր դասընկերների, ուսուցչուհու հետ միասին:

ԱՄԱՅԱ ԼՅՈՎԱԹԻ ՅԱԶԻՉՅԱՆ—Լուսանկարից նախ այս հիւսիք աղջկակը անհետ կորած է: Երկրաշարժի օրը Ամալյայի հորեղբայրը՝ Էդուարդ Հարությունի Յազիչյանը ուշագնաց երեխային հանում է անգլիական թեքումով դպրոցի փրատակների տակից, տեղափոխում է օդանավակայան, հանձնում Երևան թռչող ինքնաթիռի ուղևորությունը՝ հետագայում Երևանում գտնելու հաստատ հույսով: Սակայն հույսերն ի դերն էրան: Ամալյա Յազիչյանը անհետ կորած է: Երկու փրկարանցին ծնողներն ու հարազատները, սակայն ապարդյուն: Մինչև հիմա էլ ստույգ տեղեկություն չունեն, կենդանի է երեխան թե՛ ոչ:

ԱՄԱՅԱ ԼՅՈՎԱԹԻ ՅԱԶԻՉՅԱՆԸ ծնվել է 1979 թվականի մայիսի 7-ին, սովորել է № 20 դպրոցում, նաև՝ № 4 երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժնում, աչքի էր ընկնում երաժշտական ընդունակությամբ, զննչիկ մայրով, հաճախ հանդես էր ելել համերգներում: Ծնողները թախանձագին խնդրում են, եթե որևէ մեկը տեղեկություն ունի, տեղյակ պահի հետևյալ հասցեով. Լեհնգրադյան փողոց, 7 շենքի բակ, տեղ. նակ 8,7:

ՀԱՅՈՑ ԴՈՄՊԵՅԸ

(Ակարճ՝ 8-րդ էջում)

Ինչո՞ւ դու ֆանգեցիր Տուր Նոյան, Որի հիմները ծալակով Բո ձեռքերով դիր...

Օ. Տեր, Երբ ես հավատի առաջնեկը եղանք, Երբ ես հավատի բնորյալն էր ցնդն իմ, Ինչո՞ւ դու երկնային պատիժ ուղարկեցիր, Ինչո՞ւ հիմահատակ արիր, Բո հավատի տանաբ սրբազան,— Մեր հավատի ավելցուկի համար, Թե՛ հավատի պակասուղի դիմաց...

Եվ այսպեսից հետո, Թե կաս՝ ապա ի՞նչ, Դե, հայտնվիր, տեսնենք, Եվ, բարբառիր, յսենք՝ Թե դու ինչ ես ասում... Ասենք զաս էլ հիմա Դու ինչ պիտի ասես, Երբ դաշնուրյան ձեռք մեկնեցիր չարին, Այս անավար տարին... Մենք լեզ ինչ էինք արել, Որ մեզ ողջ-ողջ բազմեցիր դու Մեր տների փրատակների տակ, Ով անաստված աստված,— Ահա այդպես

Դու տաշկրցար, ինչպես տառս կասեր, Դու քրհացար, ասում եմ ես... Իսկ ով, Ճակատագրի փահանույթով դժնի՛ Ինձ նման ողջ մնաց, Մինչև ման- գերեզման, Պիտի կրի մի խաչ անտանելի, Պիտի ճողվի հավերժական ցավի ծանրուրյան տակ, Ու... դեռ պիտի ֆայի, կտառից ու երգի՛ Ի հեծուկս և լեզ, և բշեմայաց...

Այսպես, Միայն այսպես, Հարատևում, գոյատևում ենք մենք՝ Դար ու դարեր անվերջ... Այսպես, Միայն այսպես— Ճակատագրով Հայոց՝ թեև դատապարտված, Թայց... շարտված... Հայ ենք, Հայ ենք հայավարի պիտի տանենք, Հայ ենք հայի նման պիտի տենենք, Հայ ենք հայամբուռ պիտի՝ ծրգենք, Հայ ենք՝ հայասփյուռ պիտի ապրենք, Հայ ենք՝ հայանանձար պիտի կերտենք, Հայ ենք՝ հայրենասեր պիտի լրենենք.

(Շարունակելի)



ՀԱՄԻԿ ՌԵՄԻԿԻ ԱՂԱԱՐՅԱՆ Ծնվել է 1959 թվականի սեպտեմբերի 12-ին, Լեհիսկան շաղարում, ծառայողի ընտանիքում: Ավարտելով Պուշկինի անվան № 6 դժպրոցը, ընդունվում է ավարտում է Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնոլոգիական ֆակուլտետը: Աշխատանքի է անցնում տեքստիլ արտադրական միավորում—վերամշակման ֆաբրիկայում որպես ո-

րակի գծով ինժեներ: Ամուսնացած էր Հասմիկ ու երջանիկ էր համարում իրեն՝ փոքրիկ ՕՈՒՑԱՆԿԻՈՎ, գեղեցիկ երազանքներով ու ակրակալիքներով: Կյանքը ընդհատվեց երիտասարդ հասակում՝ մեկ տարեկան երեխայի հետ միասին: **ԺԵՆՅԱ ՄՈՎՍԵՍԻ ԽԱՆՈՅԱՆ** Զգալով օրհասական վտանգը, Ժենյան՝ ընտանիքի մայրը, նետվել էր դեպի դուտարն ու թողը՝ ճրանց հանկարծա-

հաս վտանգից փրկելու հույսով: Իր մարմնով, իր թևերի տակ անած 29-ամյա Հասմիկին և 1-ամսյա Օուշանիկին, կարծում էր, կիրկի նրանց իր անձնագրհոսությամբ: Ավա՛ղ, չկարողացավ փրկել ո՛չ՝ ճրանց, ո՛չ էլ իր կրակը: Ու... բոլորը միասին, իրար փաթաթված հրաժեշտ տվին այս կյանքին: Ժենյան ծնվել է 1931 թրվականին, Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում, բանվորի ընտանիքում: Տեղի միջնա-

կարգ դպրոցն ավարտելուց հետո ուսուցիչ շարունակում է Լեհիսկանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո 6 տարի աշխատում է հայրենի գյուղում, սակա տեղափոխվում Լեհիսկան և աշխատանքի անցնում № 5 գիշերօթիկ դպրոցում: 31 տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ, սիրել է իր աշխատանքը ու նվիրվել - անմեացորդ: Նա հասկանում էր, որ յուրաքանչյուր երեխա միշտ էլ սիրո, գուրգուրանքի և ուշադրության կարիք է գզում, ատավել և՛ գիշերօթիկ դպրոցի երեխաները: Վերջիններս ատանձնահատուկ կարիք ունեն իր մայրական ջերմ վերաբերմունքի, ուրով էլ Ժենյան շահել էր բոլոր երեխաների սերն ու համակրանքը: Այդ համընդհանուր սերը անխախտ է մնացել բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ԷՄՄԱ ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ Հարազատների, դասընկերների ու գործընկերների հիշողության մեջ ԷՄՄԱ ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ կմնա հավետ 28 տարեկան, № 15 դպրոցում ուսանած տարիների շարանին ու կրակոտ շարժումով, իր անթերի, հասնիկ արտաքինով: № 7 կենցաղի տան աշխատակցուհու հաճախողները ցավով ու ափսոսանքով են հիշում չար ճակատագրի արժանացած երիտասարդ աղջկան:

Ս Ա Դ Ո Յ Ա Ն Ն Ե Ր



Աղետը մտավ նաև Սարգսյանների ընտանիքը: Քվով հինգը, ծագով եմ գրում այս բառերը, անհմար է ներկայացնել այն մեծ վիշտը, որ բաժին ընկավ նաև այս գերդաստանին: Տարիները հիմա էլ են գումարվում, գաղիս են ու անցնում, արդեն երրորդ հուն վարն է, բայց վիշտը մնացել է ընտանիքի հոգում: Ու ժամանակից առաջ ծննդացել է Քեմուրը և ինչպես չծննա՞նա, երբ չկան կինը, հարսը, երեք լույսի կտոր իր թոռնիկ բալիկները: Ընտանական մի մեծ աղբյուր՝ ՆԱՆԱ, (ծնված 1935թ.) ՋԻՆԱ, (ծնված 1964թ.) ԼԵՐԱՄԻՆԵ (ծնված 1982թ.) ՆԱՋԻՎ, (ծնված 1985թ.) ՔԵՆՆԱՄԻՆԵ (ծնված 1987թ.) ՍԱԴՈՅԱՆՆԵՐԸ դարձել են հուշ իրենց ճանաչողների, ազգ ու բարեկամության համար: Գեր դաստանից մնացել է միայն որդիք և մեկ հատիկ՝ Էթերին, ընդամենը երեք տարեկան: Դե արի ու դիմացիր, Քեմուր, կտրել է ըսում ու դադարը, կտրել տաց ուրախ անցողաբձը, ամենի ու բարի հալացքները:



Քերթում է պրոմը. ահա կինը՝ Նանոն, բարի ու հանգիստ իր կողակիցը, որքան դժխտություններ են կեսել, որքան ուրախ պահեր ապրել միասին, մանախանդ որդուն ամուսնացնելուց հետո, երբ իրար հետևից հարսը թողնի ձեր էր պարզևում գերդաստանը:



Մին, Աշքի աղջկով անցնում են նրանք: Նանոն աշխատում էր «Հայշենկերականհանատոր» ա/մ-ում, բանվորուհի էր, շարքային, բայց շատ հարգված ու սիրված կողակտիկում: Նա մի օր էլ իր հետ գործարան տարավ հարսին՝ Ջինային: Ո՛վ կմերժեր 29 տարեկա աշխատանքային փորձ ունեցող բանվորուհու խնդրանքը: Ընդունեցին: Տաս տարի շարունակ հարս ու սկեսոր հերթափոխում էին միմյանց, հերթափոխում էին նաև տանը, որ երեխաները առանց թշադրության չմնան, իսկ տաք ճաշը միշտ ժամանակին դրվեր սեղանին: Երբ միասին էին մնում տանը, ինչպես էին ուրախանում փոքրիկ Քեմիմենով, նրա տարին դեռ չէր բոլորել:

Բայց ուրախությունը կարճ տևեց: Այդ փոքրիկն էլ չմեծացավ, նրա հետ նաև նրանից ավագները՝ Նազիկն ու Լերմինեն: Աղետի պահին թո լորը միասին էին, այդպես էլ սիրով, իրար փաթաթված, մնացին: Ո՛վ գիտի, ինչ տառապանքներով անցավ պահը թե մեծերի, թե կյանքը դեռ չճանաչած ու չճաշակած սղո լույս փոքրիկների համար: Աղետն իր հետ տարավ նրանց...

...Ըս էլ նրանց քանդված տունն է՝ Կոշտոյան 1-ին շենք, բնակարան № 6:



Լուսանկարը՝ Հ. Ներսիսյանի

ԿՈՒԻԱՑԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ողբերգության լուրը ցնցեց կուրացիներին: Հիմնարկություններում ու ձեռնարկություններում դումարվեցին բազմամարդ ժողովներ, որոնցում կազմվեցին ցուցակներ այն կամավորների, ովքեր ցանկանում են ուղևորվել հորհրդային Միություն՝ հայ ժողովրդին օգնելու համար:

Նման ժողովներից մեկի ժամանակ, ուր ներկա էի ես, Հավանայի արվարձանում հիվանդանոցի շենք կառուցող բանվորները համարյա անհատիկ ցուցակագրվեցին որպես կամավորներ...

— Զէ՛ որ դուք միշտ օգնել եք մեզ, — ասում է քարագործ Միգել Էնրիկեսը, — էլ ինչպե՞ս կարելի է հանգիստ նստել, եթե այնտեղ՝ Հայաստանում, տանջվում են երեխաներ, ծերեր ու կանայք...

Երեխաների մասին խոսեցի նաև Ֆիդել Կաստրոն՝ առաջին հատուկ ինքնաթիռը Երևան ճանապարհելիս: Ինքնաթիռը բեռնված էր արժեքավոր բեռով՝ արյան պլազմայով: Ցույց չկար, բայց Ֆիդելին շրջապատած լրագրողները՝ նրանից ինչ որ խոսք էին սպասում:

— Զէ՛ որ մենք զբաղվում կուրացիներին ինքնաթիռի ուղևորումը, — ասաց նա, — հարկավոր է այն ճանապարհ գցել, որքան հնարավոր է շուտ: Զէ՛ որ այնտեղ երեխաներ են տառապում...

Մ. ԲԵՆՅԱՆ

ԱՊՆ-ի սեփական թղթակից



ԱՎԱՆՋՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՀԱՎՈՐԻ

Ծնվել է 1981 թվականին, սովորում էր № 16 դպրոցի 1-ից քոչ դասարանում: Կյանքը նրան էլ չձգտաց: Գրում է մայրը. «Է՛մ անեմ բալես, ինչպե՛ս ես կեցի դատարկ մահճակալից, ուր տիկնիկը է հիմա թնում: Ինչո՞ւ կարողով թողնեցի մայրիկի ու ինչքան ժամանակ է հեռացել ես ինձանից: Դասարանից էլ իմ տունը, չբացել ծպիտն ու ուրախությունը: Արի բալես, ի՞նչ անգին, ի՞նչ թանկագին, արի դու ի՞նչ պարտեզի ծաղիկ...»

Տառազանայ էր դարձել Մարյանն ու նոր-նոր միայն սեսել էր կարդող մարտիայան պահերը:



ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ծնված 1963 թվականին)

Ն 5 զինեթոթիկ դարձրում, ապա թեթև արդյունաբերության տեխնիկումում լուրջ ու հավասարակշռված սան էր, ծառայության մեջ՝ զինվորական բարձր պատրաստակալություն ունեցող ռազմիկ, բանիմաց ու հարգված ենթախմբապետ՝ գուպազի ֆաբրիկայում, որտեղ, ցավոք, չար աղետն ընդհատեց նրա կենսագրությունը:

Միրելի որդու, օրինակելի ամուսնու և համեստ գործընկերուց միշտ առկա վատ կմնա, իսկ երկու փոքրիկների համար լուսանկարից իրենց մացող սիրասուն հարյիկը՝ միշտ բարի խորհրդատու ու անկաշտ դատավոր:



ՎԱՀԱՆ ՍԵՐՈԹՅԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նրա գոհվելու լուրը հավասարապես հուզեց նաև Մուսկվայի անտառամերձ գյուղերից մեկի բնակիչներին, որոնց կյանքի համար իր ընկերների հետ հրդեհի դեմ անհավասար պայքարի մեջ մղտավ № 36 դպրոցի շրջանավարտ, պոլիտեխնիկական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող Վահան Սերյոժայի Գրիգորյանը:

1971 թվականին ծնված երիտասարդը հավասարակշռված, լուրջ ու կազմակերպված բնավորություն ուներ: Նա երբեք չէր մեծամտանում իր ուսումնական հաջողություններով և համեստությունը առավել սիրելի էր դարձնում նրան շրջապատում:



ՍԱՆՎՈՒԿՏ ԲԵԳՈՅԻ ՆԿՈՑԱՆ

Սանդուխտը ծնվել էր 1956 թվականին, Լեհիստանում: Թողնում աղջկակ էր, կենտուրայն, նրա ծիծաղով լուսավորվում էր ընտանիքը: Սովորեց № 19 դպրոցում: Ավարտելուց հետո ամուսնացավ, երեք զավակներ պարզվեց իր հայրենի քաղաքին, ժողովրդին: Լավ կին էր, հավատարիմ ամուսնուհ, ապրում էր իր երեխաներով, հոգսերով: Ուզում էր նրանց այնպես դաստիարակել, որ կյանքում գորգուրեն, պաշտպանեն իրար, միմյանց թե ու թիկունք, մեցուկ լինեն...

Անգութ ճակատագիրը չթողեց, որ նա իր զավակներին մեծացած տեսնի, հասցնի իրենց նպատակին:



ԼԵՆԱ ՍԵՐՈԹԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1933 թվականին, Երևանում: Ամուսնացավ, տեղափոխվեց Լեհիստան: Չորս երեխաներ կրթեց ու դաստիարակեց Լենան: Աշխատում էր Չկալովի անվան կարի արտադրակաց միավորումում: Առաջավոր բանվորուհի էր, սիրված ու հարգված անձնավորություն: Նոր էր անցել կենսաթոշակի: Դեռ չէր հասցրել ստանալ առաջին թոշակը, երբ վրա հասավ դաժան աղետը: Աշխատանքի վաղուց էլ կըտրվեց նրա կյանքի թելը, անավարտ ու թերի թողնելով երազներ, նպատակներ:



ՀԱՍՄԻԿ ՍԻՐԵԼԻՍ

Հասակ Սիմարի Մարյանը ծնվել է 1975 թվականի մայիսի 28-ին: Սովորում էր Կիրովի անվան դպրոցի 7-րդ «Բ» դասարանում: Հասակը տանն էր, տանը հարսանիք էր, Հասակը տանը չէր, տունը դատարկ էր:



ՍԵՅՐԱՆ ՄԻՇԱՅԻ ՍԱՐԳՍԻԱՆՅԱՆ

Ի՞նչ ասել այն մտքը, որ աղետի նախորդակին չգիտես ի՞չու սարսափած պատմում էր աշխատանքային ընկերներից, թե կխելագարվի, եթե իր Սեյրանի հետ մի քան պատահի... Գոհե մի շշուկ, մի կամքով, մի ենթադրություն լինե՞ր գալիք աղետի վերաբերյալ: Ընե՞



ՀԱՅԿԱՆՈՒԾ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Խնդրում եմ արցունքները հորը՝ Ժորա Կիրակոսյանին, երբ պատմում է կույր երկրաշարժին զոհ դարձած միևնույն



ԱՐՄԻՆԵ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դաժան ու անողորմ երկրաշարժի՝ անմեղ զոհ, սառն ու

Երբ դուրս էր գալիս տանից, մայրը ասում էր, շուտ կգաս, ես ասանց քո բլրոցի շեն կարող մնալ: Հասակը հրճվում էր, նազում, հարցնում, թե որքան է սիրում մայրը փրկին: «Աշխարհը դատարկ է ասանց քեզ» ու Հասակը համբուրում էր մորը:

Հասակը հայրենասեր էր և խիզախ: Նա մեծապես հուզված էր Ղարաբաղի դեպքերից: Նա նույնիսկ 20-ին ծանրոց ուղարկեց իր անունից Ստեփանակերտի 2-րդ դպրոցի 7-րդ դասարանին: Բարի էր ու արթունաստ, աշխույժ էր ու գեղեցիկ: Դաշնա մուր էր նվագում: Երես չէր աղնում գովեստներից, ընդհակառակը, շարունակ ձգտում էր զարգացնել իր մեջ բարությունը, ծառայակամությունը, ուրիշներին օգնելը:

այդ բանը հայտնի լինե՞ր թեկուզ երեք տոկոսի հավատարմությամբ, քանի-քանիսը կըփրկվեին: Նա սովորում էր Ղարաբաղյանի անվան դպրոցի երրորդ դասարաններից մեկում: Աշխույժ էր ու ժիր, ծիծաղկոտ, ծպտերես: Դասաժառանգում նրա ազգանվան դիմաց միայն հինգեր էին: Մեծ էր հետաքրքրությունների շրջանակը: Կալ շախմատ էր խաղում: Ասում էին, որ նա այդ ուղղության բացառիկ ունակություններ էր ցուցաբերում: Դասվար Դուրբես Բարսեղյանը հաճույքով էր, որ Սեյրանը տաղանդավոր մարդ կը դառնա: Դասվարը միայն մի բան չէր գուշակել՝ մտապետ երկրաշարժը, որը նրանց երկուսին էլ տարավ միաժամանակ:

Զարմանափրաչ տղա էր Սեյրանը, ինչքան հույսեր կային կապված նրա հետ:

դստեր՝ Հայկանուշ Կիրակոսյանի մասին:

Ծնվել է 1980 թվականին, սովորել ու ավարտել Ա. Պետրոսյանի անվան հանրակրթական ու № 6 երաժշտական դպրոցները:

1988 թվականի նոյեմբերի 7-ին տեղի էր ունեցել Հայկանուշի ու Հովսեփ Սիմոնյանի նշանադրությունը: Անակնած դեկտեմբերյան այդ օրը՝ մեկ ամիս անց, ավարտվեց կոշիկի ֆարքիկա պրակտիկայի գնացած թեթև արդյունաբերության 4-րդ կուրսի ուսանողների կյանքը, որոնց մեջ էին նաև Հայկանուշն ու նրան ուղեկցող նշանաձրը:

անհաղորդ քարի վրա դաշված անուն, կիսատված կենսագրությամբ ու դառը ճակատագրով, ընթրու ու մեղմ, համբերատար ու ջերմ աղջնակ, սիրելի ԱՐՄԻՆԵ:

Մորմոքում է ընկերուհին՝ Անահիտ Մարտիրոսյանն ու մոտրում. «Եթե չգնար պոլիտեխնիկական ինստիտուտ, գոցե այդ պես չլինե՞ր»: Բայց ո՞վ կարող է պնդել, թե նա կըփրկվե՞ր, եթե սովորե՞ր բանասիրականում (այնտեղ պակաս զոհեր եղան):

Դաժան վայրկյանն հավերժ լոնցրեց ծնողների միակ դստերը՝ Արմինե Պատվականի Կարապետյանին (ծնվ. 1971 թ.):

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ ԿԱՆԱՆՑ ԶԵՌՔԵՐԸ

Երկրաշարժից սուժածնե՞րին օգնություն ցույց տալու և նրա հետևանքները վերացնելու՝ հանրապետական հանձնաժողովում նամակ է ստացվել հանրապետական կինխորհրդի նախագահությանից: Նրանում մասնավորապես ասվում է.

«Մենք կարող ենք ամեն կերպ օժանդակել անօթևան մնացած մարդկանց երևան գիկների ընտանիքներում տեղափոխելու գործում և մեր ուժերի ներածին շափ կատարել աշխատանք, որը մեզ կհանձնարարվի»:

— Կինխորհուրդները պատրաստ են ստեղծել սանիտարական շրջաններ, հերթապահություններ կազմակերպել հիվանդանոցներում, մեկնել տարերային աղետից առավել խիստ տուժած շրջաններ, օտար հարուստ նախապատրաստի, մի խոսքով, գիտության բազմապիսի ծառայություններ մատուցել, անել այն ամենը, ինչի ընդունակ են մարդկանց տառապանքները թեթևացնող կանանց բարի ձեռքերը. — ասաց Հայաստանի հանրապետական կինխորհրդի նախագահության նախագահ Ն. Հակոբյանը: — Խորհուրդը նման որոշում է ընդունել հանրապետության կանանց հասարակայնության նախաձեռնությամբ, որը մեզ դիմել է տարբեր առաջարկություններով:

Հանրապետական խորհրդի նախագահությանը, նրա շրջանային կրթամեթոդներին առընթեր ստեղծվել և արդեն գործում են շտաբներ, որոնք գլխավորում են սուժածներին կանանց կողմից օգնություն կազմակերպելու ամբողջ աշխատանքը: Նախագահության անդամների խնդրանքով հաղորդում ենք այն հեռախոսահամարները, որոնցով հասարակայնությունը կարող է առաջարկել իր ծառայությունները:

Հանրապետական կինխորհրդի նախագահություն՝ 53-18-32

Երևան քաղաքի Լենինյան շրջանային կինխորհուրդ՝ 46-18-41

Մյասնիկյանի շրջանի կինխորհուրդ՝ 56-32-44

Սպանդարյանի շրջանի կինխորհուրդ՝ 52-82-33

Մաշտոցի շրջանի կինխորհուրդ՝ 39-24-71

Օրջոնիկիձեի շրջանի կինխորհուրդ՝ 45-17-60

Սովետական շրջանի կինխորհուրդ՝ 64-57-70

Շահումյանի շրջանի կինխորհուրդ՝ 77-73-00

26 կոմիտասների շրջանի կինխորհուրդ՝ 27-32-20,

(Արմենկրես)

ԿՈՐԱՅ ՈՒ ՉՄՈՒՍԵՎԱՅ ԾԱՂԻԿՆԵՐԸ



Նորաբողոք ծաղիկ էիք մեզ մի օր, Երբ քաց արիք աչիկներդ փառավոր:

Անավոր երկրաշարժի օրը Հովհաննիսյանների ընտանիքին ընդմիջտ հրածեշտ տղվեցին նրանց երկու նորաբողոք ծաղիկները՝ ԱՆԱՆՆ ու ՆԱՄԻՆԵՆ (ծնված 1975 և 1980 թ.թ.) որոնք սովորում էին № 23 դպրոցում: Լիանան ուսման գերազանցիկ էր, միաժամանակ հաճախում էր երաժշտական դպրոց, այն պետք է ավարտեր 1988-ին: Նրա գեղեցիկ մատները դուրս եկած երաժշտությանը հանգստացնում էր ծնողներին և ինքնամոտաց աչքերն ասում էին նրանց. «Ժպտացե՛ք, իմ սիրելի ծնողներ, դուք միայն ծղպիտի եք արժանի»: Լիանան մոր հոգու ընկերուհին էր, նրա երազների մարմնացումը: Նարինեն քույրիկի նման ուսման ձգտում ուներ, պարտահանաչություն, աշխատասիրություն, իր տարիքին լուրհաստակի երեխայական անմեղություն: Թե ինչու այդ աղետալի օրը Լիանան ու Նարինեն չցանկացան դպրոց գնալ, դժվար է ասել, որն



Էլ ճակատագրական դարձավ նրանց համար:

Մոր, եղբոր՝ Արթուրի հետ միասին քույրիկները միանգամից հայտնվեցին կյանքի դժոխքում: Երեխաները սիրասուն մայրիկից աղերասգին ձայնով փրկություն էին խնդրում. «Փրկի՛ր մեզ, մայրի՛կ ջան...»: Բայց ի՞նչ կարող էր անել թևաթափ մայրիկը, երբ անգոր էր փրկելու նրանց հոշոտված մարմինները, դաժան աչիկի տակ ճկվել էին ու նրանց կյանքի երազները:

Հիմա ձեր մայրիկը արցունքներով է լվանում ձեր փոքրիկ թաթիկները ու շարունակում է ապավինել, որ օրերից մեկ օր Լիանայից կըլտեսնի ուսուցչուհի դարձած, իսկ Նարինեն՝ երաժիշտ:

Հավերժ հիշատակ ձեզ՝ նորաբողոք ծաղիկներ, թող ձեր կյանքի երազները շարունակվեն հանդերձյալ կյանքում, իսկ ձեր մայրիկի մերմունջը թող հասնի ձեզ:

Կանչե՛, կոռնե՛, կանչե՛, Բանի գարուն է, Աշխարհին արև, ինձի դումաց է...

ԼՈՒԻՉԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԵՐ ԳԱՅԱՆԵՆ

Քաղաքային գեղեցմանատները թողնում են ճնշող տպավորություն: Տարերային աղետից հետո հարյուրավորակվել են սրբատաշ, քարաշեն հուշատախտակները, որոնց վրա փորագրված է մեկ թիվ՝ 1988: Բոլորիս համար պարզ ու ցավալի մի փաստ...

Այսպիսի մի հուշատախտակ կա այն մասնաբժանի վրա, որի տակ հանգչում է Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի ԳԱՅԱՆԵ ՆՈՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ, որի 16-րդ գարունը դեռ չէր բուրդել:

Անեց անգամ, կրք ցայում եմ նրա սև շրջանակով լուսանկարին, չեմ պատկերացնում, որ այդ գեղեցիկ աչքերով, ծիծաղկոտ հարցքով, երազներով լեցուն աղջիկը այլևս մեզ հետ չէ:

Գպրոցը Գայանեի համար դարձել էր սրբության օջախ: Մեկ անգամ ես նրանից լսեցի հետևյալ խոսքերը. «Եթե հիվանդանամ էլ, միևնույն է, դպրոց պիտի գնամ»: Գայանեն սիրում էր դպրոցը, դպրոցը՝ Գայանեին: Հարազատները, դպրոցի աշակերտները, հարևանները, թաղի երեխաները սիրով և գուրգուրանքով նրան անվանում էին «Մեր Գայանե»: իր համեստ բնավորու-



թյան, շրջապատի նկատմամբ լավատեսության և առաքինության համար:

Գայանեին փատակների տակից դուրս բերեցին ու զիջեցրով, միմյանց ձեռք բռնած հանգել էին դասընկերները: Նա դեռ կենդանի էր և խոսեց մեզ հետ: Նրա ստաշին բառերը էին՝ «Մերոնք բոլորը ո՞րչ են»: Ավա՛ղ, դրանք Գայանեի շուրթերից դուրս էկող վերջին բառերն էին: Գայանեի կենսաքար ծպտող փատակնուրդ դեմքը ցողվել էր վշտով, տառապանքի արցունքներով:

Այսօր մայր հողի գրկում հանգչում է մի քաթի ու ազնիվ սիրտ՝ մեր Գայանեն:

ՍԱՆԴՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԸՆՏԱՆԵՎԱՆ ԱԼԿՈՄԻԾ

Ընտանիքը համարվել էր ևս մեկով: Տասը՝ ՌՈՆԻԿ ՅԱՐՎԱԾԱՆԸ (ծնվ. 1987 թ.) խնամքով, ուրախ սրտով պատրաստում էր նորածին թոռնիկի և իր սիրելի հարսի շոքերը, ծննդատանից ձրանց տուն բերելու համար, երբ ցնցվեց գետինը ոտքերի տակ և երկրի ամենակույ ընդերքը նրան գերզանց հարձակ: Նա չիմա-

ցավ, որ մեծան դառն ճակատագիր բաժին հասավ նաև հարսին ու սիրասուն որդիներին, անմահ Գաբրիելիկին:

Դեռ Գուշկիմի անվան դպրոցում ուսանելու տարիներին սվազ որդին՝ ՄՆԱԾԱԿԱՆ ՀԱԿՈՐԾԱՆԸ (ծնվ. 1959 թ.) աչքի էր ընկնում մարդկանց նկատմամբ իր բարեհոգի ու ուշադիր վերաբերմունքով, նրանց օգնելու պատրաստակամությամբ: Թերևս դա էր պատճառը, որ նա կարճ ժամանակում սիրելի դարձավ հիվանդանոցային համալիրի իր գործընկերներին, ուր աշխատում էր: Նա լավ ամուսին էր, ընտանիքի օրինակելի հայր՝ երջանիկ իր զավակով: Ծիշտ էր կատարել ընտրությունը: ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈՐԾԱՆԸ ևս աշխատում էր համալիրում և

նա էլ էր վայելում գործընկերների սերն ու հարգանքը: Ստեղծվել էր ամուր խաբբայված մի երջանիկ ընտանիք, որի առանցքը սիրասուն զավակն էր՝ 1987 թվականին ծնված ԳԱՐԻԵԼԻԿԸ: Երիտասարդ կինը՝ Ռուզաննան ծննդատանը կնքեց իր մակամարտը, անտեղյակ թե ով կստանձնի ողջ մնացած նորածին խնամքը, քանի որ ինչպես հիշատակվեց սև աղետի գոհ դարձան նաև հայրը, տատը և հորեղբայրը՝ ԱՐԹՈՒՐ ՅԱՐՎԱԾԱՆԸ (ծնվ. 1969 թ.): Կրտսեր զավակն էր նա ընտանիքի, սիրելի թոշորի: ՆՅ 23 դպրոցում սովորելիս նա աչքի էր ընկնում ուսումնական առաջադիմությամբ, նկարչական ձիրքով և ընկերասիրությամբ: Զինակոչիկ տղան չհասցրեց հազնի զինվորական շինելը...

ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳԻ ԱՐՈՒՀԱՄԾԵՆ

Սովորում էր Դարիբջանյանի անվան դպրոցի առաջին դասարանում: Հասցրեց տառանաչառության հանդեսին մասնակցել, դպրոցական իր հուշերն ունենալ: Բայց ով մասնակցել է ՆՅ 4 մանկապարտեզում 1987 թվականի ավարտական հանդեսին, զգացած կլինի երեխաների խորը գիտելիքները, փոքրիկների առաջադիմությունը նախապատրաստության գործում:

Ծնվել է 1981 թվականի հունիսի 2-ին: Հաճախում էր համակրական և նկարչական դպրոցներ, հետաքրքրություն էր հանդես բերում թվաբանա-



կան վարժությունների և արհեստների նկատմամբ:

Գրեթե բոլոր առաջին դասարանցիների հետ Կարենն էլ զոհվեց տարերքի հովիտի հարվածներից...

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԺՈՐԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆ

Ծնվել է 1971 թվականին Լեհիստանի քաղաքում: Դեռ Հ. Հակոբյանի անվան դպրոցում ուսանելու տարիներից նրա ծնունդ էր ինժեներ դասնալ: Միջնակարգն ավարտելուց հետո անդամագրվել էր «Էլեկտրատեխնիկական» գործարանի կոլեկտիվին՝ հաջորդ ուսումնական տարում պոլիտեխնիկական ինստիտուտի դիմորդ դառնալու հաստատ վճիռով, չնայած հավասարապես սիրում էր նաև գրականությունն ու արվեստը:

Ծավոք, չիրականացավ նրա երազանքը, խոր ցավ պատճառելով ոչ միայն հարազատներին, այլև ընկերուհիներին, ո-



րոնցից մեկը՝ Հրանուշ Մանուկյանը, նրա հիշատակին ձոնած իր սրտի հուշքն ավարտում է այսպես.

Ես քեզ երբեք չեմ մոռանա: Դու լավն էիր, քնքուշ, բարի, Իմ սիրելի Արմենուհի...

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ



Երկրաչարժի ժամանակ ՆՌՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԾԱՆԸ հարսի՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ և թոռան՝ ՎԱՀԱԳՆԻ հետ տանն էր, Ծիրակացի փողոցի 78 շենքի 26-րդ բնակարանում: Երեքն էլ զոհվեցին: Հազար-հազարավոր-



ների պես... Նորան աշխատում էր քաղաքի ծննդատանը, թվում էր, թե երջանիկ է՝ համերաշխ ու բազմացող ընտանիքով, սակայն երկրաչարժը ավերեց նաև նրա օջախը:

Պատմում է Արմենուհու

մայրը.— Գիտեք, թե որքան կյանքով լեցուն էր աղջիկս, ինչպես էր պարուն, ամուսնուց: Սակայն ամենաշատը սիրում էր Պարույր Մեակի պոեզիան: Կյանքի չափ ծաղիկներ էր սիրում նաև: Հենց կրթաթոշակ էր ստանում, լիներ գարուն, թե ձմեռ՝ պետք է ծաղիկներով տուց գար: Անսահման նվիրված էր ամուսնուն, ընտանիքին. Վախճան որդուն: Իսկ սկեսրոջ մասին ասում էր. «—Մա, ոնց որ ինքը ինձ ծնած լինի, այնքան հոգատար է իմ նկատմամբ»: Ամուսնու՝ Ալիկի և որդու հետ նկարվել են աղետից 8 օր առաջ, և Ալիկը (սովորում էր Մոսկվայում) գնաց, որպեսզի տուն վարժի՝ կնոջն ու երեխային Մոսկվա տեղափոխելու համար: Ավաղ, նրա նըպատակը խորտակվեց...

ՎԱՐԴԻԹԵՐ ՎԱՐԳԵՍԻ ԳԱՍԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1955 թվականին: Թե՛ Հ. Կարախանյանի անվան դպրոցում, և թե՛ առևտրախոհարարական ուսումնարանում սովորելու տարիներին Վարդիթերը եղել է գործունյա, աշխույժ, պարտաճանաչ աշակերտ և ուշադիր անձնավորություն շրջապատի նկատմամբ: Այսպես են հիշում նրան նաև սեուտի ցանցի իր գործընկերները:

Բնավորության լավագույն գծերը դրսևորվում էին նաև ընտանիքում, ուր աճում էին անուշիկ բալիկները: Նոր պիտի վայելելն Արագած ճեմարդրոցի ՆՅ 4 շենքում մի քանի օր առաջ իրենց ստացած բնակարանը, դեռ փոխախում էին գույքի դասավորությունն ու



հարմարեցնում սենյակների դիրքին, դեռ մտորում էին պակասը լրացնելու, ամբողջացնելու մասին: Ապագայի պայծառ երազներ ունեին: Մահաբեր այդ պահին էլ երիտասարդ կինն իր բնակարանում խոհեթի հետ էր, որը կյանքի հետ վերջակետվեց բնության չար հնարվածով...

ՂԱԶԱՐՅԱՆ ՌԻՏԱ ԱՐՏԱՎԱԶԻ

Այս գեղեցիկ աղջիկը ծնվել է 1955 թվականին, սովորել և ավարտել է ԵրԳԻ-ի Լեհիստանյանի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետը: Աշխատում էր «Մագնոն» ՀԿՏԲ-ում, որպես ինժեներ-կոնստրուկտոր: Դեռ չէր բուրդել կյանքի 88 տարին, դեռ չէր վայելել կյանքը իր ողջ գեղեցկությամբ, չէր հասցրել շատ բան անել... Հեզ ու բարի, պարզ ու քնքուշ այս աղջիկը կյանքին ու մարդկանց նայում էր իր բարի ու մաքուր հոգով, վարակիչ լավատեսությամբ ու...

Առավոտ էր, դեկտեմբերյան դաժան մի առավոտ: Ծառերի նման նա էլ սովորականի պես վեր կացավ, գնաց աշխատանքի ու ... չվերադարձավ: Այդ մահաշունչ օրից՝ դեկտեմբերի 7-ից օրեր էին անցել, իսկ մենք շարունակում էինք փնտրել քեզ, գեղեցիկ Ռիտա: Անցել էր 13 օր, բայց դու չբկայիր: Ապրասիելի էր մտածել, որ դու չկաս, սակայն ամենա սարսպիելին 13-րդ օրն էր, երբ... Հայր ու մայրը Ռիտային շատ են հորդորել, որ չգնայ

նոր շենքը, ասես սրտերը վրկայել էր գալիք ողբերգության մասին: Ծավոք, Ռիտան չլսեց ծնողներին ու...



ԱՆԵՏԱ ՎԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Զուլալ ու անմեղ հայացք, մեղմ ու քնքառու բնավորություն ունեցող ԱՆԵՏԱՆ (ծնվ. 1958 թ.):

Թե՛ Մ. Մաշտոցի անվան դպրոցում և թե՛ պոլիտեխնիկական ինստիտուտում սովորած տարիներին ուսման գերազանցիկ աղջիկը աչքի էր ընկնում իր պարտաճանաչությամբ ու ճշտակատարությամբ: Աղյպես շարունակվեց նրա աշխատանքային կենսագրությունը նաև «Ավանգարդ» ինստիտուտում, որի վկայությունը նրան շնորհված պատվոգրերն ու շնորհակալական թերթիկներ



ընդ են, ընկերների սերն ու հարգանքը: Անողջ երկրաչարժն, սվաղ, կարճնց երիտասարդ աղջկա գեղեցիկ կենսագրությունը:

ԲԵՐՄՈՒԹՅԱՆ ԵՐԱՆԿՅՈՒՆԻ



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ և ՄԻՍԱՔ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Սկզբում «եռանկյունի» արտահայտությունը օգտագործում էին միայն երկաթուղայինները: Տարիներ անց ամառի այդ վայրը դարձավ հազարավոր մարդկանց անձնական հասցե: Մի բան անհայտ

էր բոլորին, որ բնակելի ճորգանգվածը ոչ պակաս աղետաբեր էր լինելու, քան ինքը՝ Բերմուդյան եռանկյունին: Եռանկյունու հազարավոր զոհերից մեկն է ՀԱՍՄԻԿ ԱՐՁՈՒՄԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ծնված 1967 թ. մարտի 8-ին: Սովորել և ախարտել է Մ. Արմենի անվան դպրոցը: 8-րդ դասարանում աղջիկը զրկվեց մորից: Կա

փոխարինեց աշխատող մորը: Ուսուցչուհի դառնալու երազանքը մնաց ինչ-որ մի տեղ՝ հեռվում: Իրականը Չկալովի անվան կարի ֆարիկան էր: Այստեղ նա անդամագրվեց երիտասարդական արտադրամասին, դարձավ երիտասարդ աղջիկների կոմերիտական դեկավարը: 1987 թվականին ամուսնացավ: Մեկ տարի անց, երբ բոլորել էր 20 տարին, ծնվեց առաջին որդին՝ ՄԻՍԱՔ ՀՐԱԶԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆԸ: Ո՞վ էր տեսել, որ մեռնի երջանկությունը, այնքան երիտասարդ, այնքան ծաղկափթիթ: Մայր ու որդի դարձան եռանկյունու բազում զոհերից մեկը: Չկա Համսիկը: Նրա կարտուն ու սերն է թևածում երկու բնտանիքներում, որոնց համար նա աղջիկ էր ու հարս, մայր էր ու քույր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱՅԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կյանքում հազվադեպ է պատահում, երբ մի անհատի մեջ ամփոփվում են մարդկայինը, բարին ու գեղեցիկը, եվրոպականը: Մեղմ ու բարի ծագում, լայն ու խոհուն ճակատ, գեղեցիկ ու թափանցող հայացք, մտածկոտ ու խելացի դեմք: Այսպես ենք հիշում մեր սիրելի ընկերոջը՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱՅԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ: Ընդամենը 27 զարուն ազրեց բազմաթիվ երազանքների ունեցող, կյանքի շեմին նոր ոտք դրած երիտասարդը: Հովհաննեսը գիտեր, որ կյանքը չի սիրում ծուլիբիկն ու վախկոտներին: Ահա թե ինչու զժվարությամբ, բայց ինքնուրույն կերպով հաղթահարելով բոլոր խոչընդոտները՝ ընդունվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ազդեցիկ ինժեների ֆակուլտետը, որն աճարտելուց հետո աշխատանքի անցավ հայրենի քաղաքի «Մագնես» հատուկ կոնստ-



րուկտորական տեխնոլոգիական բյուրոյում, որտեղ էլ իր մասկանացուն կնքեց ահադոր աղետի օրը: Հովհաննեսն ապրում էր հարազատների ու ընկերների հոգսերով, սիրում է օգնում էր նրանց: Ժողովրդավարական և արցախյան շարժման գործուն մասնակիցներից էր, հայրենասեր բառիս իսկական իմաստով: Միբեյի ընկեր, ոչ մի օր չի խամբում քո հիշատակը, առօրյա հոգսերը չեն մոռացնում հիշողությունները՝ երջանիկ, ուրախ ու անհոգ, բայց արդեն անկրկնելի:

Հայաստանի երկրաշարժին նուիրում. Լուսանկարչական Գիրք Մր Երազանք Առվ

ԳՅԼԻԹ («Մարմար») - Ֆրանսիական «Փայլանքի» հրատարակչատունը, որ վերջինս, հրատարակած էր հայ լեզվագիտության ֆրանսերենի թարգմանած գործեր, լույս ընծայած է նաև յուրյան լուսանկարիչ Անթուան Ահուճեանի Հայաստանի երկրաշարժին նուիրված լուսանկարները լուսագրքից հիմա մը, որ կը կրէ «Մարմին տանի կրակը» խորագիրը: Գիրքը կը բացուի խորացրի մաշակած նշանուրը գրագիտ Ալվերթո Մորավյանի նուիրանով, զոր հեղինակը խոսած է Երևանի մէջ, 1958ին: Անթուան Ահուճեան Հայաստանի երկրաշարժին նուիրվազէս հոտք գացած է Հայաստան եւ մասնակցած մարդասիրական աշխատանքին, ուր իր աշխատանքին առնթեր տարած է լուսանկարչական աշխատանք, նոյնպէս այցելելով Արցախի ու յատ-

կազէս Լորդարալի պիտաները, որոնք աշխատանքի արդիւնաւոր գործը ինկատուելին լրացող գործուն համար: Գիրքը կը պարունակէ 143 լուսանկարներ եւ սեփական հարցազրույց ֆրանսական հրատարակչատուն կողմէ պիտի տրամադրուի ԱՄՆԱՍՍ մարդասիրական ընկերակցութեան, որ աշխատանք կը տանի օժանդակելու Հայաստանի: Ալվերթո Մորավյան, որ վերջերս մաշակու, հետեւեալը գրած է իր 1958ի գրութեան մէջ: «Ե՛րժուար է բացատրել զգացական այն մթնոլորտը, որ ինչպէս աղ-գային հրաբուխի մը յաւան կ'եռեռնի միւսերու եւ դուռտերու տակ, ինքզինքը զգալի կը դարձնէ այս ծագովորդին բոլոր շարժումներուն եւ խօսքերուն մէջ»:

LE FEU SOUS LA GLACE
Arménie 1989-1990
photographies
Texte d'Alberto Moravia
ANTOINE AGOUDJIAN



«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՆՈՒՄԻ ԿՈՄՍԱՅՐԻ ԲԱԶՎԱՏԻ ՅՊԱՐԱՆ, ՄԱԾԱՅԱՆ Փ. 47